ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1675-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 13.08.2024Թ. N 1246-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ Կադաստրի կոմիտեի 09/10/2024թ. N Կ-09102024-06-0210 որոշումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի 13.08.2024թ. «ՆԱԻՐԱ ՎՐՈՒՅՐԻ ԽԼՈՊՈՒՋՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 06-002-0012-0034 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 1246-Ա որոշման 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ալավերդի քաղաքի Մարտի 8-ի փողոց հասցեում գտնվող, կադաստրային 06-002-0012-0034 ծածկագրով, 1.7446 հա մակերեսով հողամասում գտնվող վարչական շենքերի և պահակատան գործառնական նշանակությունները փոփոխել որպես հասարակական գործառնական նշանակության հյուրատուն օգտագործելու, իսկ վկայականում առկա մյուս գույքերի գործառնական նշանակությունները թողնել նույնը»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 08
ք. Ալավերդի